

ԳԻՏԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ

ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ՝

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Գաղափարական ինստիտուտի հրատարակությամբ լույս է տեսել ահադ. Գր. Հափանցյանի «Արա Գեղեցկի պաշտամունքը» հետաքննարկական և ուղղորդող ուսումնասիրությունը հայերեն լեզվով:

Այդ աշխատության մեջ ահադ. Գր. Հափանցյանը պատմական ու լեզվական հարուստ նյութի օգնությամբ ներթափանցում է հետազոտության մի նոր բնագավառ՝ հին հայոց սովորությունների ու պաշտամունքի ասպարեզը, որը մինչև այժմ սովորաբար գիտնականների տեսադաշտից դուրս է մնացել: Հայկական հնագույն կուլտուրան ու սովորությունները իրենց խաղացած դերով վաղուց դուրս են եկել ազգային նեղ շրջանակներից և համաշխարհային կուլտուրայի ասպարեզը մտել: Բայց նախասովետական շրջանում, երբ հետին պլանի վրա էին մղվում փոքր ժողովուրդների կուլտուրան ու մշակույթները, հայ առաջավոր ինտելիգենցիան չէր կարող ցույց տալ այն մեծ դերը, որ խաղացել է հայ ժողովուրդը այլ ժողովուրդների կուլտուրայի զարգացման մեջ: Նա նույնիսկ գրկված էր աշխատելու և ստեղծագործելու մի նիստի հնարավորություններից, իսկ օտարազգի գիտնականները, կատարելով իրենց տերերի պատվերը, ամեն կերպ աշխատում էին փոքր ժողովուրդների, որոնց թվում և հայ ժողովուրդի ստեղծած կուլտուրայի լավագույն արտահայտությունները կամ փոխառություն, կամ անմիջական ազդեցության հետեանք համարել:

Սովետական կարգերը մեր երկրում հաստատվելուց հետո միայն լայն հնարավորություն ստեղծվեց մեր կուլտուրայի զարգացման ու ճիշտ արժեքավորման համար. «Հոկտեմբերյան ռեվոլուցիան».—ասում է ընկ. Ստալինը,—կտրելով հին շղթաները և ասպարեզ քաշելով մի շարք մոռացված ժողովուրդներ ու ազգություններ՝ նրանց նոր կյանք ու նոր զարգացում տվեց: («Մարքսիզմը և ազգային-գաղութային հարցը», էջ 215): Միայն Հոկտեմբերյան ռեվոլուցիան ստեղծեց այն նախադրյալները, որոնք անհրաժեշտ էին մեր ազգային կուլտուրայի բազմակողմանի զարգացման ու նրա նվաճումների օգտագործման համար: Այդ մեծ տեղաշարժերը, որոնք կատարվեցին մեր ժողովրդի կյանքում, գնալով ավելի ու ավելի պայծառորեն են ուրվագծվում, ավելի ու թեղ կերպով ընդգծում հին ու նոր հայագիտության միջև եղած տարբերությունները:

Ահադ. Գր. Հափանցյանի ուսումնասիրությունը մի անգամ ևս ցույց

է տալիս, որ նոր հայագիտությունը անհամեմատելիորեն առաջ է անցել հին հայագիտությունից: Արա Գեղեցկի և հին հայոց առասպելների ու աշխարհայացքի մասին եղել են շատ այլ ուսումնասիրություններ: Նույնիսկ մեր ժամանակներում, բայց ոչ Սովետական Հայաստանում, արտասահմանում կատարվել են լուրջ ուսումնասիրություններ այդ հարցի առթիվ: Այդ հետազոտություններից կարելի է նշել Ն. Ադոնցի և Ա. Մատիկյանի ուսումնասիրությունները, որոնք լույս են տեսել արտասահմանում, 15—20 տարի առաջ: Սակայն այդ հետազոտությունների հեղինակները չեն ընդգրկել այնքան լայն պրոբլեմներ և չեն բացահայտել այնպիսի իրողություններ, որոնք առաջ է քաշել և լուսարանել է ակադեմիկոս Գր. Լափանցյանը իր այս ուսումնասիրության մեջ: Նա իր այս աշխատությամբ ոչ միայն առաջնորդում է մեզ դեպի «առասպելների» այն աշխարհը, ուր մեռնում ու հարություն էին առնում աստվածները, կամ արալեզները լիզում ու կենդանացնում էին մարդկանց, այլ և ցույց է տալիս այն ընդհանուր իդեոլոգիան, որի հիման վրա ձևավորվել են այդ առասպելները, նշում այն կապը, որ կա հայ և այլ ժողովուրդների կուլտուրաների մեջ, և պարզում հայ ժողովրդի պատմության, առանձնապես նրա հնագույն շրջանի պատմության և նրա առաջացման հետ կապված շատ պրոբլեմներ:

Նա իր դիրքը բաժանում է երեք մասի: Առաջին մասում մանրամասնորեն քննության է առնում Արայի պաշտամունքի վերջին և զարգացած փուլը, երբ նա հանդես է գալիս որպես մեռնող ու հարություն առնող աստվածության հայկական մի արտահայտությունը կամ վարիացիան, պահված լինելով գլխավորապես «Արայի և Շամիրամի» հայտնի առասպելում, ինչպես մասամբ և Պլատոնի հաղորդածի մեջ «էր հայորդու» մասին (Գր. Լափանցյան, «Արա Գեղեցկի պաշտամունքը», էջ 3): Այնուհետև տալիս է մեր առասպելի սոսկական նկարագրությունը, շարադրում այդ նյութի ուսումնասիրության էտապներն ու մոմենտները: հիսունական թվականներից սկսած մինչև մեր օրերը, քննության է առնում հին Միջագետքի և մեր Ֆոլկլորի միջև եղած և՛ իդեոլոգիական և՛ լեզվական աղերսը, տալիս հայ առասպելների երեք դեմքերի՝ Արայի, Շամիրամի, Արալեզի գենեզիսը, ապա ընդհանուր գծերով նկարագրում մեռնող և հարություն առնող աստվածության այլ տարբերակները և նրանց հետ համեմատում «Արա-Շամիրամ» առասպելը: Այդ բաժնի վերջում նա խոսում է հայկական հին պաշտամունքի և քրիստոնեության միջև եղած կապի մասին և ցույց տալիս, որ քրիստոնեական հայ գործիչների ու սրբերի և նրանց մասին եղած ավանդությունների ու հին հայոց պաշտամունքի միջև կա սերտ կապ, որը հարատևել և ազդել է քրիստոնեական կերպարների և «սրանց հետ կապված ավանդությունների վրա»:

Ակադ. Գր. Լափանցյանը մանրամասնորեն քննության առնելով առաջ քաշված հարցերը, ճիշտ կերպով եզրակացնում է, որ Արա-Շամիրամ հայ առասպելը հիմնովին ձևակերպվել է մեր էրայից առաջ 7—6-րդ դարերում, այն ժամանակ, երբ հայերը որպես ինքնուրույն էթնիկական խմբակցություն հանդես են գալիս Ուրարտուի տերիտորիայի վրա, թեև Արան մինչև այդ էլ ժողովրդականություն է ունեցել: Արայի անունը՝ իր ինքնուրույն կուլտուրայով և մնացորդներով, նա համարում է տեղական՝ հայկական: Բնիկ է համարում նաև արալեզ բառը, որը կազմված է արալ կամ արլ

արմատից և եզ գոյականացնող մասնիկից: Ակադեմիկոս Գր. Ղափանցյանի Արա և արալեզ բառերի ստուգաբանությունը միանգամայն համոզիչ պատճառաբանված է, որովհետև նա բառը ստուգաբանում է ոչ միայն հնչյունական ձևավորումը նկատի ունենալով, այլ և բառի իմաստային ու իդեոլոգիական կողմը հաշվի առնելով: Այդ մոտեցումը հնարավորություն է ընձեռում նրան ավելի բազմակողմանի կիրպով վերլուծելու բառը և գտնելու բառի առաջացման, կամ իմաստի ձևավորման ակունքները: Այդ հարցերը պարզելու համար նա օգտագործում է նաև հին ու նոր և օտար լեզուները, այլ ժողովուրդների սովորություններն ու առասպելները:

Զանազան ժողովուրդների մշակույթները, ինչպես նաև առասպելներն ու սովորությունները ակադ. Գր. Ղափանցյանը չի դիտում միմյանցից անջատված. միմյանց հետ կապ չունեցող դրություն մեջ. նրանց մեջ նա տեսնում է այնպիսի ընդհանրություններ, որոնք խարսխված են ընդհանուր զաղափարախոսության վրա: Անջրպետով միմյանցից չեն բաժանված նաև հին ու նոր սովորությունները. ավանդություններն ու պաշտամունքը: Թամուզի, այդ մեռնող ու հարություն առնող աստծու պաշտամունքը չվերացավ իսլամ, Վաբելոնումն անգամ, երբ նրա կուլտուրական կոնսոլիդացիան զազաթնակետին էր հասել և բոլոր աստվածներին ձուլեցին Մարդուկի մեջ. որպես վերջին գծերի արտացոլանքները՝ էմանացիաները, էլի Թամուզի պաշտամունքը շարունակեց մնալ և կատարվել, այդ դեպքում արդեն Բել-Մարդուկի միջոցով. քանի որ նա ձուլել էր նաև Թամուզին, որը մեծ ժողովրդականություն ուներ և կարող էր Մարդուկի այդ միասնական աստվածությանը խանգարել (նույն տեղում, էջ 44—45): Միաստվածության իդեան նույնպես սերտ կերպով առնչված է հին պաշտամունքների հետ: Հրեաները մոնոթեիզմի իդեան վերցրին և զարգացրին և քրիստոնեության նոր վերսիայով պահեցին մեռնող ու հարություն առնող հին աստվածության բնույթը, որը հետագայում տարածվեց ամբողջ աշխարհում: Հայերի մոտ մեռնող և հարություն առնող աստվածությունը Արա Գեղեցիկն է եղել, որը նույնպես, իր տարբերություններով հանդերձ, ունեցել է նաև նմանություններ այլ ժողովուրդների աստվածությունների հետ: Քրիստոնեությունը շատ բան է վերցրել Ատտիսի կուլտից՝ հացով ու գինով հաղորդվելը, մկրտությունը, աստծու հարության ծեսը, իսկ հոռմեական պապը կրում է նույն թագը, որ կրում էր Ատտիսի զլխավոր քուրմը (առիթիզալը): Ատտիսը, որը ծնվել է կույսից, տանջվող է, մեռնող և հարություն առնող, որն իր տանջանքներով սրբում, մաքրում է բնությունը և մարդկանց, հանդիսանում է քրիստոսի նախատիպը (նույն տեղում, էջ 51—52):

Բոլոր առասպելներն ու պաշտամունքները, անկասկած, ընդհանուր գծեր ունեն. բայց դրա հետ միասին ունեն նաև իրենց տարբերությունները, որոնք ավելի կարևոր են տվյալ ժողովրդի ինքնուրույնությունն ու ինքնատիպությունը պարզելու տեսակետից: Այս հարցի նկատմամբ նույնպես Ակադ. Գր. Ղափանցյանը ճիշտ կարծիքներ է արտահայտում. նա համեմատելով Արայի և Շամիրամի առասպելը հին Արևելքի նման առասպելների հետ, նշում է, որ մեր առասպելը յուր մի շարք դրսևորումներով տարբերվում է մյուս առասպելներից, նա սուամերաբաբելական վարյանտին հատուկ ստորերկրյա աշխարհ, աստվածների միջամտություն,

կյանքի արգասավորության դադարում և այլն չունի: Բայց ի տրիտուր այդ բոլորի մեր առասպելը ունի հավելումներ՝ «հատկապես Շամիրամի վերաբերյալ. նշելով նրա փախուստը դեպի Հայաստան, սաստիկ ծարավը (պասքումը), յուրութի նետելը ծովի մեջ, նրա արձանանալը նման Նիրոբին: Սիրո հանդամանքն ընդհանուր է այս կարգի առասպելներում և կրում է կյանքի շարունակության պահանջի կնիքը» (նույն տեղում, էջ 52): Արալեզների դերը հայկական առասպելի առանձնահատուկ կողմերից մեկն է. զուտ տեղական ծագում ունի նաև առասպելի արական հերոսը՝ Արան, որի հետքերը պահպանվել են հայերի մեջ մեր էրայի առաջին դարերից սկսած, բայց քրիստոնեական շղարշով պարուրված: Այդ հետքերը ակադ. Գր. Ղափանցյանը տեսնում է Գրիգոր Լուսավորչի և ս. Սարգսի կերպարների մեջ: Գրիգոր Լուսավորիչը դեռ պահել է զրսի որոշ ազդեցություն, բայց ս. Սարգիսը «հանդես է գալիս որպես զարնան պաշտաման զուտ հայկական ձևավորվածությունը, շարունակելով պահել քրիստոնեական սրբի շղարշի տակ նախկին Արայի բովանդակության հին ձևը» (նույն տեղում, էջ 68): Նա պահել է նաև մի այլ հանգամանք, որը կապվում է Արայի հարության հետ. այդ շան օգնությունն է, որ տեսնում ենք Արայի լեզենդայում ի դեմս արալեզների: Ակադ. Գր. Ղափանցյանը իր դրքի առաջին մասում Արա և Շամիրամ առասպելը իր բոլոր կողմերով ու զրսերով մանրամասն քննելուց հետո անցնում է արայիզմի բուն իմաստի վերլուծմանը՝ իր գրքի երկրորդ մասի շարադրմանը:

Գրքի այդ մասում նա քննում է Արայի պաշտամունքը անկախ «Արա-Շամիրամ» առասպելից: Արայի հնագույն կերպարանավորումը կամ բովանդակությունը զրսերով է նրա վեգետացիոն կամ երկրագործական բնույթում, որը միևնույն ձևով արտահայտվել է մի շարք երկրներում՝ տարբեր ժողովուրդների հնագույն պաշտամունքների մեջ: Արայի պաշտամունքի այդ տարածվածությունը ցույց է տալիս, որ ժողովուրդները մեզներից դեռևս հազարավոր տարիներ առաջ սերտ կապ են ունեցել միմյանց հետ, որ Փոքր Ասիայի, Ռուսաստանի, ինչպես նաև Բալկանների և այլ երկրների ժողովուրդները չինական պարիսպներով սահմանադատված չեն եղել միմյանցից: Նրանք նյութական կուլտուրայով ու սովորություններով շատ հաճախ այնքան շատ շփման կետեր են ունեցել, որ ականա նրանց միմյանցից սերելու համոզմունքներ են առաջ բերել շատ ուսումնասիրողների մեջ: Սակայն այդ նմանությունների և ընդհանրությունների զգալի մասը առաջացել է միանգամայն իրարից անկախ պայմաններում՝ միևնույն ստադիալ մտածողության և ընդհանուր աշխարհայացքի հոգի վրա: Բայց երբ այդ հին սովորություններն ու երևույթները հանդես են գալիս միևնույն անվան տակ և միևնույն ֆունկցիաներով, փոխադարձ խաչավորումն ու ազդեցությունն անխուսափելի են լինում: «Հայկական այդ հոգևոր-կուլտուրական հին պաշտամունքային բեկորներն ու փշրանքները, երբ հանդես են գալիս միևնույն ԱՄ կամ ԱԴՅ անվան տակ, որպես արդեն ձևակերպված մի ընդհանուր-կրոնական-իդեոլոգիական աշխարհայացքի արտահայտություն, որպես ինչ-որ սպեցիֆիկ «արայիզմ» իրեն այդ նախնական բովանդակությամբ թե՛ Հայաստանում և թե՛ նրա սահմաններից շատ հեռու (Փոքր Ասիա, Ռուսաստան, թերևս Բալկանները...), արտացոլում են նաև հայերի (նախահայերի) մեծ կուլտուրական

դերը մեր էրայից առաջ, ինչպես նմանը տեսնում ենք հետազայում և քրիստոնեական որոշ աղանդների մեջ, որպես հայկական ներդրում» (նույն տեղում, էջ 4)։

Արայի աստվածության նախնական բնույթը, զարգացումն ու վերապրումները խոշոր նշանակություն ունեն ընդհանրապես կրոնա-իդեոլոգիական շատ հարցեր պարզելու տեսակետից։ Վերջին շրջանում հայտարարած փաստերից երևում է, որ Փոքր Ասիան է եղել կուլտուրական շատ մշակույթների, ինչպես նաև իդեոլոգիական-կրոնական պաշտամունքի շատ երևույթների կենտրոնը։ Կար ժամանակ, երբ եվրոպական գիտնականներից շատերը, խեղաթյուրելով պատմական փաստերը, կուլտուրական ամեն մի նորություն եվրոպական որոշ, իշխող ժողովուրդների ստեղծագործությունն էին համարում։ Նրանք նույնիսկ Արա աստվածությունը հենդեվրոպական էին համարում, թեև այդ աստվածությունը մեր էրայից դեռ հազար հինգ հարյուր տարի առաջ գոյություն է ունեցել Փոքր Ասիայի ժողովուրդների մոտ (խեթերի և ուրիշների)։ Արան իր բոլոր արահայտություններով շարունակել է հարատևել փոքրասիական ժողովուրդների լեզուների ու սովորությունների մեջ նույնիսկ այն ժամանակ, երբ նրանք ենթարկվել են հունահռոմեական ազդեցությանը և ընդունել քրիստոնեությունը։ Արան, սակայն, միայն տեղական, փոքրասիական նշանակություն չի ունեցել։ Նա միևնույն անվան տակ պաշտվել է Հայաստանում։ Ուրարտույում, Փոքր Ասիայում, Վրաստանում, Ռուսաստանում և այլ երկրներում։ Այդ ժողովուրդները բոլորն էլ մինչև այժմ էլ պահում են Արայի պաշտամունքի որոշ հետքեր։ Վրացիները ունեցել են Aralo ձևով հողագործության մի աստված, որը մինչև այժմ էլ շարունակում է մնալ իրենց մահկալի երգերում։ Արա աստվածությունը որպես փոխառություն անցել է նաև արևելյան սլավոններին և պահպանվել նրանց Яр կամ Ярило աստվածության մեջ։ Ռուսների, ուկրաինացիների և Բելոռուսների մոտ մեր Ar(a) աստվածությունը,—ասում է ակադ. Գրիգոր Ղափանցյանը,— ավելի ցայտուն է պահել իր բուսական (վեգետացիոն) և երկրագործական դեմքը և այն էլ շարունակվում է մինչև 19-րդ դարը» (էջ 81—82)։

Սլավոնական Яр կամ Ярило և հայկական Ար-Արա աստվածների հիմնական բովանդակությունները շատ գծերով նման են միմյանց։ Երկուսն էլ ունեն գարնան զարթոնքի ու ռազմական նոր գծեր և պահել են մեռնող ու հարություն առնող աստծու բնութագիրը։ Այդ նմանությունները և մի շարք այլ փաստեր հիմք են տալիս ակադ. Գր. Ղափանցյանին սլավոնական Яр աստծու անունը Հայաստանից սերված համարել։ Հայ և ռուս ժողովուրդների լեզուների մեջ նկատված ընդհանրությունները, ինչպես նաև պաշտամունքային որոշ փոխազդեցությունները ցույց են տալիս, որ այդ ժողովուրդների միջև ստեղծված բարեկամությունը երկար դարերի պատմություն ունի։ Հայ և ռուս ժողովուրդների այդ կապը գնալով ավելի ու ավելի է ամրացել, մինչև որ դարձել է պատմական անհրաժեշտություն, առանց որի հայ ժողովուրդը իր գոյությունը շարունակել չէր կարողանա։

Ակադ. Գր. Ղափանցյանը իր այս ուսումնասիրությամբ վճռում է նաև մի շատ կարևոր հարց։ Հայտնի է, որ նախասովետական շրջանում օտար և նույնիսկ հայ շատ գիտնականներ աշխատել են հայկական կուլտուրան բացատրել իրանականով։ Վերջին պատմական դժբախտություն է կախ-

ված եղել հայ ֆիլոլոգիայի վրա — աշխատել ամեն կերպ, — ասում է նա, — հայոց նյութական թե հոգևոր (այս թվում և լեզվական) մատերիալը պարզաբանել նախ և առաջ իրանական աշխարհով. Ն. Մառը հազար տնգամ իրավացի էր. երբ իր ժամանակ բողոքում էր այդ տեսակետի տեսակետի դեմ (էջ 90). Բայց հայերը ոչ միայն սանդղակ են ինքնուրույն կուլտուրա և լեզու. այլև ազդել են շատ ժողովուրդների, նույնիսկ իրանցիների վրա և օժանդակել նրանց կուլտուրայի զարգացմանը. Այդ տեսակետից շատ ուշագրավ է ակադ. Գր. Ղափանցյանի դիտողությունը հնդեվրոպական մի շարք բառերի առաջացման մասին. նա առաջարկում է հնդեվրոպական Ar կամ Or բառարմատը, որ նշանակում է «ծագել, ծնվել (բարձրանալ)», հարություն առնել, Արա անունից սերված համարել. Այդ տեսակետը շատ հավանական է, որովհետև այդպես է կատարվել նաև Իշտարի հետ, երբ հնդեվրոպական լեզուները յուրացրել են Իշտարի աստեղային հանգամանքի հետևանքով նույն Իշտար անունը «աստղ» հասարակ առումով. Իսկ Արայի պաշտամունքը, որպես հարություն առնող ու մեռնող, որպես զարնան, բուսականության, երկրագործության ու վարուցանքի, բնության զարթոնքի ու անեցողության կուլտ, ամենատարածվածն է եղել այն երկրներում, ուր ուժեղ հակադրություն կա ձմեռվա և կենսատու զարնան միջև. Այդ բազմաթիվ իմաստների հետ են կապում նաև «ծագել, առաջանալ, վեր կենալ, բարձրանալ» հասկացությունները, որոնք միևնույն բայարմատով մտել են եվրոպական մի շարք լեզուների մեջ.

Արայի պաշտամունքը շատ խորը արմատներ է գցել հայ ժողովրդի մեջ. Հայաստանի զանազան տեղերում հայտաբերված քարակոթողների շուրջ հյուսված լեգենդաների, հայկական տեղանունների ու կրոնական սովորությունների, հայ առասպելների, նույնիսկ քրիստոնեական առանձին սրբերի բնութագրի մեջ պահպանված են արայի դի հետքերը. Արագած, Արագեճ, Արահեդ, Արահուժ, Արաժիկ տեղանունների առաջին մասը (Արա) անկասկածելիորեն կապվում է Արայի հետ. Անգամ մեր Թրաքեստ հասարակ բառը կապվում է Արայի հետ. Իրանական, ինչպես նաև որևէ այլ ազգացություն, չի կարողացել հայերի միջից արմատախիլ անել Արայի պաշտամունքի հետքերը, որոնք պահպանվել են ոչ միայն մեր լեգենդաների և նյութական կուլտուրայի մնացորդների, այլ քրիստոնեական սրբերի բնութագրի և ծիսակատարությունների մեջ, թեև Հայաստանում քրիստոնեությունը պաշտոնական կրոն հայտարարելուց հետո բոնի կերպով վերացվեցին հեթանոսության շրջանի հետ կապված կուլտուրական շատ մշակույթներ ու սովորություններ:

Ի գրքի երրորդ մասում ակադ. Գր. Ղափանցյանը քննարկում է Արայի կուլտի նյութական մնացորդները, որոնք նա տեսնում է Արարատյան դաշտավայրի շրջապատի լեռների վրա գտնված հայկական քարակոթողների մեջ, որոնց բնույթն ու բովանդակությունը, նրա կարծիքով, մինչև այժմ ճիշտ լուսաբանված չեն եղել. նա ասում է, որ Արայի կուլտը, որը շատ ուժեղ է եղել հատկապես Ուրարտու-Հայաստանում, իր մարմնավորումն է թողել Արագածի և Գեղամա լեռների վրա հայտաբերված քարակոթողների մեջ, որոնք գտնվում են այդ լեռների բարձրագույն տեղերում, արտափայրերում, լճերի և աղբյուրների մոտ. Այդ քարակոթողները առաջին անգամ հայտաբերել է Սմիթսոնյան ընկերությունը, որը Ն. Մառի հետ ուսումնասիրել և հրատարա-

կել է: Սմիլնովից և Մառից հետո մի քարակոթող գտնում է ինքը՝ Գր. Ղափանցյանը (1912 թվին): Հետագայում, արդեն 1920 թվին, Հայաստանի Հնությունների Պաշտպանության կոմիտեն Արագածի վրա գտավ երեք այլ քարակոթող: Վրաստանում նույնպես գտնվել են նույն բովանդակությամբ ունեցող քարակոթողներ:

Այդ քարակոթողների լուսաբանմանը երկու մոտեցում է ցուցաբերված. ոմանք դրանք կապել են վիշապ Դեմոնի, իսկ ոմանք էլ Աստղիկ (Դեռկետո) դիցունու հետ: Այդ երկու մոտեցումներն էլ, թեև հշմարտության որոշ հատիկներ ունեն իրենց մեջ, բայց լրիվ չափով չեն սպասում մեր քարակոթողների բովանդակությանը: Ակադ. Գր. Ղափանցյանը վերլուծման ենթարկելով այդ արձանները իրենց բոլոր կողմերով, ցույց է տալիս, որ դրանք առաջին հերթին արտահայտում են գարնան, պտղաբերության, բուսականության ու բազմացման զաղափարները, հետևաբար կապվում են Արայի հետ, որովհետև Արան մի սինկրետիկ բնությի աստվածություն էր, որը միացնում էր այն ամենը, ինչ որ ակնկալում էր դյուզադին: «Այստեղ նրա ակնկալիքն էր և՛ գարունը և՛ հոգի բուսականությանը, մանավանդ ցորենը, վար ու ցանքը: Արան նաև ջրի մարմնացումն էր Հայաստանի պայմաններում, ուր առանց արհեստական ոռոգման մեծ տանջանք էր քաշում այդ ժողովուրդը: Գարնան ակնկալությանը մեր դասան ձևավանից հետո, անդրապատկերում է նաև բնության հարությանը ձմռան մահվանից և տանջանքից հետո: Արան ևս նաև գարթոնքի և հարության կերպար է ընդունում» (էջ 137). այդ պատճառով էլ գարնանալի չէ այն հանգամանքը, որ ձյն- արմատը միշտ ք լեզուներում նշանակել է մերթ փոքրել, մերթ էլ՝ հարության առնել, ծագել, բարձրանալ: Արայի հարակցվելը կնոջ հետ, ի դեմս Շամիրամի, ակադ. Գր. Ղափանցյանը համարում է ուշ շրջանի, ավելի քաղաքակրթված սեմական հարավի ազդեցություն, թեև չի ժխտում կնոջ հանգամանքն ընդհանրապես, մանավանդ որ որոշ դեպքերում պաղաբերության և բեղմնավորության դիցաբանական էակները մեծ մասամբ տրվել են կնոջ կերպարանքով:

Ի մի բերելով Արայի անվան և կուլտի մասին իր ասածները, ակադ. Գր. Ղափանցյանը արայիգմի արտահայտությունները բնութագրում է որպես գարնան նոր բուսականության՝ ծլի, ծաղկի, ցորենի աստվածություն: Արան որպես գարնան գարթոնքի հետ կապված աստվածություն, հանդիսանում է նաև արթնացող ուժերի, գեղեցկության, ուժի, հետևաբար՝ ազմական բնույթի աստվածության կամ հերոսի մարմնացում: Սակայն Արան ոչ միայն եղել է գարնան, բույսի և ուժերի գարթոնքը մարմնացնող աստվածություն, այլև արդասավորության ու պաղաբերության կամ բերքի աստվածություն: Նա հատկապես երկրագործության աստված էր և վերջապես, նրա գարթոնքի ընդհանուր զաղափարի կապակցությամբ, նաև՝ մեռնող (առնջվող) և հարության առնող աստվածության տեղական արտահայտություն, որը իր խորը արմատներն է թողել քրիստոնեական վարդապետության մեջ: «Արայի պաշտամունքի դոսեոքումը, կապված այդ իր անվան հետ, հայերի համար ունի ոչ միայն ընդհանուր պատմա-կուլտուրական և կրոնա-զաղափարախոսական նշանակություն, որով նա ազերսակցվում է, ինչպես տեսնում ենք, միշտ ք ժողովուրդների հետ, այլև նեղ պատմական

նշանակություն, որքան որ այդ աստվածությունը հայերին հիմնական կերպով կապում է հին Փոքր Ասիայի հետ» (էջ 159)։

Արայիզմը, որպես մեռնող ու հարություն առնող նոր որակի աստվածություն կամ գաղափարախոսություն խորը արմատներ գցելով հայ ժողովրդի մեջ, հայերի միջոցով փոխադրել է շատ ժողովուրդների կուլտուրաների ու նրանց գաղափարախոսությունների ձևավորման վրա, դեռ քրիստոնեությունից շատ ու շատ դարեր առաջ։ Բայց Հայաստանը, — ինչպես ճիշտ կերպով նշում է Եր. Ղափանցյանը, — և նրա սահմանակից երկիրները կուլտուրական-իդեոլոգիական մեծ դեր է խաղացել ոչ միայն նախաքրիստոնեական հնագույն շրջանում, այլ նաև հետագայում, քրիստոնեության պայմաններում, երբ տիրող բյուզանդական իշխանությունները եկեղեցին ու օրթոդոքսալ կրոնը դենք էր դարձրել փոքր ժողովուրդներին ճնշելու և ազատ միտքը կաշկանդելու համար։ Արայի պաշտամունքը, թեև կազմվել էր հին փոքր-ասիական ժողովուրդների բնապաշտական, տնտեսական պահանջների և կուլտուրայի հոգի վրա և հայերի մոտ սկսած հնագույն շրջանից ստացել տեղային ինքնուրույն երանդավորում և արտահայտչական նոր կողմեր, բայց և այնպես շարունակել է մնալ ռուպես համամարդկային կրոնա-իդեոլոգիական ստեղծագործության մի ցայտուն արտահայտություն, մի ցայտուն ընդլիզում» (էջ 162)։

Արայի պաշտամունքը երեք հիմնական փուլի է բաժանվում, մեկը այն շրջանը, երբ նա հանգես է դալիս որպես նախնական սինկրետիկ բնույթի մի աստվածություն, որն անդրապատկերում է գարունը, բնության զարթոնքն ու արգասավորությունը, մյուսը՝ Արայի և կնոջ (Նուարդի, ապա Շամիրամի) միակցության փուլը, որով երևում է արտաքին քաղաքակրթության ազդեցությունը, և երրորդը՝ այն շրջանը, երբ Արան կորցնելով կամ փոխելով իր անունը շարունակում է հարատևել քրիստոնեական առանձին սրբերի պաշտամունքի մեջ։ Արայի պաշտամունքի զարգացման այդ երեք շրջաններն էլ հավասարաչափ գիտական հետաքրքրություն են ներկայացնում, որովհետև դրանցից յուրաքանչյուրը արտացոլում է մեր ժողովրդի հոգեկան իդեալական կյանքում կատարված տեղաշարժները։ Արան միշտ բարձր է եղել, նստած իր գահի վրա սարերի կանաչի մեջ, աղբյուրների շրջապատում։ Նա երկրագործի երգերում «եզո»-յի անձնավորումն էր, նման եգիպտական Ապիսին։ Նա ս. Սարգսի անվամբ գյուղեգյուղ շրջելով նոր վարդապետություն էր տարածում, անշուշտ, զարթոնքի հովեր։ Եվ արդյոք քրիստոնյա հայ բողոքականները այս դիտել չլարունակեցին իրենց պապիկիանությունը, արևապաշտությանը և թոնդրակեցությանը, երբ դեռ 19-րդ դարում անդամ խնուցի դադթականները Շիրակում քարոզում էին «Բանալի ճշմարտության» դրքի խոսքերը։ Հայ թոնդրակեցի Հակոբ Եպիսկոպոսը 11-րդ դարի կեսում այնքան մեծ ժողովրդականություն ուներ, որ, ըստ Ա. Հասաթիկերտցու, «թեև գնդիս հանել հրամայէր, չէր ոք որ ընդդիմանայր»։ Ներքին հոգեկան վերափոխումն ու կատարելությունը նրանք հակադրում էին պաշտոնական եկեղեցու դոգմատիզմին իրեն քարացած ծեսերով ու խորհուրդներով։

Մենք գիտենք, որ Արան դարձել էր նաև աստղանուն հին հայերի մոտ։ Բայց գիտենք նաև, որ Հայկն էլ է այդ ձևով անդրապատկերվել թե հնում և թե հետագա բարբառներում (Վանում) Օրին համաստեղության

հետո Սրա մեջ ես ցանկանում եմ տեսնել հայի գոյավիճակի արտահայտու-
թյան երկու հիմնական խորհրդանշում՝ սիմվոլիկա՝ Հայկը անգրապատ-
կերվել է երկնքում որպես մեր ցեղի պաշտոնման աստվածը (Schutzgott),
իսկ Արան որպես հայի ակնկալիքի ու պայքարի լուսառու աստղը, նրա
իդեալացիան։ Պակասում է կարծես թե Արամի (Արմենակի) նման խորհր-
դանիշը նույն լուսատուների շարքում, բայց գուցե սա պատահական էլ չէ,
քանի որ հայի սկզբնական կոնսոլիդացիան կապվում է ըստ իս միայն
Հայաստանի (Փոքր Հայքի) հնագույն պետության ու ցեղերի հետ։ Բաղ-
մայա փորձությունների մեջ անգամ հայ ժողովուրդը չհրաժարվեց այդ
երկու լուսատու աստղերից—իր ցեղի պաշտոնության հավատքից և նոր
դարձնաբային հավատքից։ Նոր դարձնաբային ապագայից, իր նոր Արայից։

Եվ այստեղ էր, որ մեր Արային օգնության եկավ նմանապես արա-
յապաշտ մի մեծ ժողովուրդ, որ Արայի աշխարհից էր իր Яромир-ներով,
որը փարում էր Արայի փառքին Ярослав-ներով, որը մեծաքանակ էր իր
Ярополк-ներով, Եվ այս րանը նա կատարեց դեռ մեր էրայից 7 դար առաջ
իր հերոս գմիրներով և իր Սկայորդի-հսկաներով։ Միջին դարերում, երբ
հայի բնօրրանը իրոք «ածու փոքր» էր, իսկ մահիկը որպես իրոք «տխրա-
դեմ լուսին» բնավ չէր ժպտում մեր գոյավիճակի երկու աստղերին՝ Հայկին
ու Արային, մեղ այցելող ռուզիկների արևը վառ ու պայծառ էր և նրանց
Վլադիմիրը կիսում «Красное солнышко» էր, իսկ հետագայում, արդեն
մեր նոր դարաշրջանում այդ նույն ռուզիկների նոր Վլադիմիրը իր կար-
միր արևի համաշխարհային փայլով դարձնեի ու փրկության նոր լույս
հասցրեց հային, որը իր Արայի մեջ դեռ հնուց շարունակում էր տեսնել
զարունը, դարձնեքը, արգասավոր նոր կյանքը, նոր ակնկալիքը։ Այո,
կանաչի Արան, վար ու ցանքի Արան չէր կարող դարձնել առանց պայծառ
արևի, առանց նրա ջերմացուցիչ ճառագայթների» (էջ 165, 167)։

Հավ է ասված։ Մեր ժողովուրդը, այդ հնագույն ժողովուրդը վերա-
ծնվեց ու կարողացավ հասնել երազած բարձրությանը միայն այն բանի
շնորհիվ, որ նրան օգնության ձեռք մեկնեց ռուս մեծ ժողովուրդը, որը
Լենինի և Ստալինի ղեկավարությամբ արդեն կոփվել, հզորացել ու զարգաց-
ման նոր ուղու վրա էր կանգնել։ Այժմ, Սովետական մեծ Միության բաղ-
մագը ժողովուրդների համերաշխ ընտանիքում հավասար իրավունքներով
տեղ գրավող հայ ժողովուրդը ոչ միայն ստեղծում է բովանդակությամբ
սոցիալիստական և ձևով ազգային իր կուլտուրան, այլև ցուցադրում է իր
հնագույն կուլտուրայի բարձր արժեքները և դրանք Սովետական Միու-
թյան ժողովուրդների կուլտուրայի ոսկե ֆոնդը մտցնում որպես թանկա-
գին մարգարիտներ։ Ակադ. Գր. Հափանցյանը իր այս դրքով մեր պատ-
մության ընդերքից լույս աշխարհ է հանել այդ մարգարիտներից մեկը և
սովետական հասարակությանը ներկայացրել։ այդ պատճառով էլ ցանկալի
է, որ այդ դիրքը հրատարակվի նաև ռուսերեն լեզվով՝ դիտական ապարա-
տուրայով հանդերձ։ Հայկական ՍՍՄ Գիտությունների Ակադեմիայի Պատ-
մության Ինստիտուտի նախաձեռնությամբ՝ հրատարակել հայ հնագույն
կուլտուրայի ու իդեոլոգիայի զանազան հարցերի մասին կատարված
ուսումնասիրությունները, գովելի է ու ժամանակին։

Ս. ՂԱԶԱՐԾԱՆ